

Խ. Վեմյան

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ բարբառների դասակարգման հիմքը, ինչպես հայտնի է, մինչև այժմ ընդունված է ձևարանական սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի, հայերենի բարբառները հիմնականում բաժանված են երեք ճյուղի: Կանգ չառնելով այդ բոլոր ճյուղերի մեջ մտնող բարբառների առանձնահատկությունների և նրանց դասակարգման հիմունքների վրա, մենք ցանկանում ենք նշել, որ «կրճ ճյուղի մեջ դասված մի քանի արևմտահայ բարբառների սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները «կրճ եղանակիչով չեն կազմվում, հետևաբար բոլորովին սխալ է դրանք «կրճ ճյուղի մեջ դասելը»:

Ձևարանական դասակարգումից առաջ հայ բարբառները դասակարգել են աշխահագրական սկզբունքով: Սակայն հարկ է ասել, որ դրանք տեղերի (աշխահագրական) անուններով անվանելը պարզապես այս կամ այն բարբառախումբի տարածված երկրամասը նշել է, և ոչ թե բուն այդ բարբառախումբը գիտականորեն բնորոշել:

Հայ բարբառախումբերը (ճյուղերը) բուն իսկ լեզվարանական տերմիններով բնորոշողը և ըստ այնմ դասակարգողը եղել է պրոֆ. Հ. Աճառյանը (1909), որ իրավամբ իր ուշադրությունը դարձրել է բառային հիմնական ֆոնդից էլ ավելի դանդաղ փոփոխվող և լեզվի մեջ միս ու արյուն դարձած կառուցվածքին:

Նա գլխավոր բարբառախումբերը (ճյուղերը) բնորոշելու համար վերցրել է քերականական ամենաշատ կատեգորիաները բովանդակող մի այնպիսի հիմնական իմաստ, որը արտահայտելու համար գլխավոր բառախումբերը վործածում են յուրաչատուկ քերականական ձևեր, այն է՝ սահմանական ներկայի և անկատարի կազմույթյան եղանակը, որոնց յուրաքանչյուրում պարունակվում են բայի դեմքի, թվի, եղանակի ու ժամանակի շորս քերականական կատեգորիաները:

Պրոֆ. Հ. Աճառյանի հայ բարբառների դասակարգման այդ շափանիչը շատ անշիտիկ կերպով կիրառելի է արևելահայ բարբառների նկատմամբ, ուր ում-ով սահմ. ներկան և կ-ով ենթադրական եղանակը իմաստով էլ, ձևով էլ որոշապես տարբեր են (հիմա գրում եմ, հետո կգրեմ), սակայն, երևի, նույնքան համարձակ կերպով կիրառելի չէ արևմտահայ բարբառների նկատմամբ, որովհետև սրանք իսկապես երեք գլխավոր խմբի են բաժանվում այդ տեսակետից. — 1) Արևմտահայ այնպիսի բարբառ, ուր սահմանականը (ներկան և անկատարը) և ենթադրականը նույնաձև են, ինչպես Կարնո, Մ՛չո, Վանի, Դիարբեքիբի, Խարբերդ—Երզնկայի, Ակնա, Ղրիմի և Առտիալի բարբառները:

Երկրորդ խմբի սահմ. ներկան ու անկատարը թեև ենթադրականից տարբեր՝ յուրահատուկ ձևով են, բայց էլի կ-ով են, ինչպես՝ Գոլսի, Ռո-

տոսթոյի, Իգմիրի, Սերաստիայի, Եփղոկիայի, Օրատուի և Ջեյթունի բարբառները:

Իսկ երրորդ խմբի, որ հողվածիս գլխավոր առարկան է, սահմ. ներկան և անկատարը առանց կ-ի են, ինչպես Սրարկիրի, Մալաթիայի, Շապին Գարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Պոտորջրի (գրարարակերպ) և Նիկոմիդիայի. 7 բարբառ, որոնց վրա ուրիշ ավելացողներ կան արգեն, նորագույն հետազոտությունների իբր արդյունք, և գուցե էլի կլինեն ապագայում:

Մեր նպատակն է ցույց տալ, որ այս երրորդ խմբի բարբառները չեն պատկանում կը ճյուղին, քանի որ այդ մասին շփոթ կարծիքներ կան:

Այդ շփոթ կարծիքների թյուր եզրակացությունը կարելի է այսպես, ամփոփել. — քանի որ առաջին խմբի 8 բարբառների սահմ. եղանակի ներկան և անկատարը պատկանում են կը ճյուղին, և քանի որ երկրորդ խմբի 8 բարբառների սահմ. ներկան ու անկատարն էլ պատկանում են կը ճյուղին, ուրեմն երրորդ խմբի բարբառներն էլ պետք է կը ճյուղի համարել, քանի որ սրանց էլ ենթադրականը կը-ով է. և կարելի է անգիտանալ կամ անտեսել սրանց ոչ — կը-ով սահմ. ներկան ու անկատարը: Բայց այսպիսով գասակարգման չափանիշը փոխած կլինենք. որով՝ նույնիսկ -ում ճյուղն էլ իր ճյուղ լինելու հատկանիշը կկորցնի (քանի որ նրա ենթադրական եղանակը նույնպես կ-ով է) և կը ճյուղին կմիանա:

Տրամաբանորեն սխալ է բարբառները գասակարգելիս մի գեպքում սահմ. եղանակը (ներկան և անց. անկատարը) հիմք համարել, և մի այլ գեպքում՝ ենթադրական եղանակը:

Այդ սխալը պարզորեն ցույց տալու համար զուգահեռենք -ում ճյուղի և, օրինակ, Սրարկիրի բարբառի բայերի քննարկվող ժամանակները. բայց նախ՝ մի քանի ճշտումներ բայի ժամանակների կիրառումների մասին:

Պայմանական կամ ենթադրական եղանակը հաճախ առանց պայմանի է գործածվում, և իսկականում մի տկա՛ր ապառնի է, որ ցույց է տալիս մի բան անելու և կամ լինելու հոժարելը, այդ բանը հավանական կարծելը, առանց, սակայն, կամքի մասնավոր ճիգի և կամ պնդումի. օր. հետո կրերեմ, վաղը կգան, և այլն: Այս պատճառով հարմար է որ ռեհավանական ապառնիք էլ կոչվի:

Իսկ սահմ. ապառնին մի շեշտված ապառնի է, որ ցույց է տալիս հաստատ որոշում, և կամ հաստատ նախամացում, որի վրա պնդելու պատճառ կա, օր. հետո բերելու եմ, վաղը գալու են, և այլն:

Ճիշտ է, որ բայի այս կամ այն ժամանակը հաճախ գործածվում է ոչ իբր բուն իմաստով, այլ մի ուրիշ ժամանակի կամ նույնիսկ եղանակի իմաստով, օր. կերթաս կրերես (ենթադր. եղ.) — գնա բեր (հրամ. եղ.), չերթաս բերես (բղձ. եղ.) — գնա՛ բեր (հրամ. եղ.), երթանք (բղձ. եղ.) = երթա՛նք (հրամ. եղ.), գրեք պրծեք (բղձ. եղ.) = գրեցեք վերջուցրեք (հրամ. եղ.), գնում եմ (սահմ. ներկ.)՝ վաղը Սևան եմ գնում (սահմ. ապառ.), հա՛ կհա (անց. կատ.) = շուտով գալու եմ (սահմ. ապառ.): Նույնպես՝ Ժամեն օր գնում գալիս է՞ ձեռով սահմ. ներկա է, բայց ցույց է տալիս ոչ թե տվյալ բայերի անընդհատ շարունակությունը, այլ անցյալում սրանց կրկնված լինելը, հաճախությունը, սովորակա՛ն գարձած լինելը, առայժմ վերջին կրկնումը լինելով հիմա՛ կատարվածը:

Իսկ՝ «դեռ շատ կգնա կուզա» ցույց է տալիս բայի ոչ թե շարունակումը, այլ այդպիսի կրկնուսները ապագայում:

Իայի ժամանակների այսպիսի ոճական գործածությունները չեն հերքում բայի տվյալ ձևի բուն իմաստը, ճիշտ ինչպես որ «վատը վճռեցին թնդանոթները», ասելով թնդանոթը օրենսգետի տեղ չենք դնում. կամ՝ «Մասիսը մեզ հիացրեց» ասելով Մասիսին գործողություն չենք վերագրում: Նույնիսկ «հիմա» բառը հաճախ գործածում ենք ապառնի՝ «մի քիչ հետո» իմաստով. օրինակ՝ հիմա կգամ: Ես նկատի ունեմ բուն իմաստները:

Այժմ՝ զուգադրումը, համիմաստը համիմաստի հետ

-ուս ճյուղ

Արարկիրի բարբառ

սահմ. ներկ.— լսում ես	= լըսնս բ
անց. անկ.— լսում էիր	= լըսեիր ո
ենթադր. ապառ.— կլսես	= լըսնս կու ¹ , կու լըսես
» անց. ապառ. կլսեիր	= լըսեիր կու, կու լըսեիր
սահմ. ապառ.— լսելու ես	= տի լըսնս, լըսնս տի ¹
» անց. ապառ.— լսելու էիր	= տի լըսեիր, լըսեիր տի
հարկադր. ապառ.— պիտի լսես	= լըսելու յես
» անց. ապառ.— պիտի լսեիր	= » էյիր:

Այսպես, Արարկիրի բարբառում կը-ով ձևը ենթադրական եղանակ է (հավանական ապառնի), և ոչ թե սահմ. ներկա, անց. անկատար, որոնց համար յուրահատուկ ձևեր կան: Այդպես նաև մյուս 6 բարբառներում. Մալաթիայի՝ լսիմ ա, լսիր յա. Շապին Գարահիսարի՝ լսիմ տար, լսեի տար. Տրապիզոնի՝ լսիմ էր, լսեի էր. Համշենի՝ լսիմ ունի, լսեյը ունի. Խոտորջրի (գրաբարակերպ)՝ լսիմ, լսեի. և Նիկոմիդիայի՝ կը լսիմ հայե, կը լսեի հայե²: Այսպես նաև՝ մի քանի նոր հետազոտվող բարբառներում:

Ոչ-կը-ով սահմ. ներկա եվ անկատար ունեցող արևմտահայ ուրիշ խոսվածքներ.— Պրոֆ. Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն»-ում (1911 թ.) և նույնիսկ «Հայոց լեզվի պատմություն»-ը հատորում, թեև նշում է մի շարք հայ բարբառների շարունակական ժամանակների առանց կ-ի կազմությունը, սակայն դարձյալ կը ճյուղի մեջ է համարում, և առանձին ճյուղի հարց չի դնում. 1949 թ. մենք հանգամանորեն ուսումնասիրելով մեր բարբառները, եկանք այն եզրակացություն, որ կը ճյուղի ենթադրված բարբառներում ոչ-կը ճյուղի բարբառներ կան և նկատի առնելով (Արարկիրի) մոտակա Շեփիկ գյուղի սահմ. ներկան ան-ով (օր. քանիմ ան = գործում եմ), և մոտակա Ամբրերկա գյուղինը (քանիմ ան), և ոչ շատ հեռու Մալաթիայինը (քանիմ ա), և մոտակա Տիվրիկինը (քանիմ ի) հավանական է կարծել, թե սահմ. ներկայի այդ ը, ան, ա եղանակիչները, պետք է, որ ծագած լինեն ահա-ից: Պետք է նկատի ունենալ Արարկիրի ը՛հը, ըհը՛նա (=ահա, ահալասիկ), ուր տեսնում ենք երկու ա-երի ը դառնալը, որով՝ խաղա՛մ ահա > խաղա՛մ ըհը > խաղա՛մ ը, և այլն:

¹ «Կու» և նմանները գրում ենք այնպես, ինչպես տվյալ բարբառը խոսողները գրում էին: կ, ք խուլերը ձայնեղ գ, ո հնչելով:

² Անուշան, Հայոց լեզվի պատմություն, հատ. Բ., էջ 337—358:

Ամենակարևոր իրողությունը, սակայն, բարրառների ձևաբանական դասակարգման տեսակետից, այն է, թե Արարկիրի բարրառը, իր մի շարք ենթաբարրառներով միասին, միայն փոքր մասամբ կը նյուդի բարրառ է, այսինքն միայն ձայնավորով սկսող բայերով, և 3 միավանկ բայերով (գալ, լալ, աալ), ընդամենը գրեթե 100 հատ. իսկ բաղաձայնով սկսվող մնացած մոտ 900 բայերովը մի առանձին՝ 5-րդ ճյուղ է, քանի որ սա ձևվերն ունի առանց կը, կու, կա, կօ-ի.— սահմ. ներկա.— լըսիմը... և այլն-անց. անկ.— լըսէյի նը... և այլն:

Առանց կ-ի սահմ. ներկա (շարունակական) ունեցող ուրիշ երեք բարրառներ ես այստեղ հրապարակում եմ:

1. ԵՐՁ բարրառ.— Այժմու Տիվրիկ կամ Տիվրիկի քաղաքը հին Տեֆրիկեն է, որ 9-րդ դարում Պավլիկյան առաջագեմ շարժման մայրաքաղաք եղավ քառորդ դար, և 871-ին, Արարկիրի և Արղաունի ամրությունների նման կործանվեց բյուզանդական կայսր Վասիլ Ա-ի բանակի ձեռքով: Տիվրիկի բարրառում սահմ. ներկան (շարունակականը) ահա. լըսեմ ի, լըսես ի, լըսա ի, լըսենք ի, լըսեք ի, լըսեն ի, անց. անկ.— լըսէի ի, լսեիր ի, լըսեո ի, և այլն:

Հնարավոր է, որ այս ի եղանակիչը ծագած լինի մի ուրիշ ձայնավորից. հիշենք՝ Առտիալի բարրառում կի—կը, կու. օրինակ՝ կի մնաք, կի թողում, կի հանգչի: Արարկիրի բարրառում Ետաշտի քերուկը-ը հնչվում է Ե—քերիկ: Բայց համենայն դեպս խիստ հավանական է, որ ծագած լինի Արարկիրի ը եղանակիչից, քանի որ այդպիսի ը>ի հնչյունափոխությունը հաճախագեպ է նենց Տիվրիկի, ինչպես և Արարկիրի, Խարբերդի և այլ բարրառներում, բաղաձայնով սկսվող հարյուրավոր բայերի մի քանի ժըխտական ձևերի պարագային.— սահմ. եղնկ. անց. կատ. չըլըսեցի>չիլըսեցի, ելն. ապո. չըպիտի>չիպտի՝ չիտի լըսիմ, ելն. ըդձ. եղնկ. չըլըսեմ>չիլըսիմ, ելն. չըլըսեի>չիլըսեի, ելն. գերբայներ՝ չըլըսելի>չիլըսելի, չըլըսած>չիլըսած, չըլըսող>չիլըսող, չըլըսելու>չիլըսելու, չըլըսելիք>չիլըսելիք՝ նաև ուրիշ բառերում.— կըշոելի>կիշոեելի, գըժվար>գիժար, ընդոր>ինդոր, ճըրագ>ճիրագ, քըշել>քիշել, ձրմեո>ձիմաո, ճըճի>ճիճի, և այլն:

2. Ե բարրառ.— Սահմ. ներկա.— լըսիմ ա, լըսես ա, լըսա յա, լըսինք ա, լըսեք ա, լըսեն ա: Անց, անկ. լսէյի յա, լըսէյիր ա, և այլն:

Այս բարրառը խոսվում էր Արարկիրի մոտակա Շեփիկ, և մի քիչ ավելի հեռու Մաշկերտ և Անջրդի գյուղերում, բայց մանավանդ Կապան Մադեն (Գյումուշ Մադեն) քաղաքում (Արարկիրի և Խարբերդի միջև): Այսպիսով՝ շարունակական ներկա ունեցող բարրառների արևելյան սահմանը այլևս Շապին Գարահիսարը չէ՛, այլ փոխադրվում է Եփրատից էլ արևելք, հին Ծոփաց նահանգում, արգեն՝ Մեծ Հայքում:

3. Ե բարրառ.— Սահմ. ներկա.— լըսիմ ան, լսես ան, լսա ան, լսինք ան... լսին ան. անց. անկ. լըսէյի ան, և այլն:

Խոսվում էր Արարկիրի մոտակա Ամրըրկա, և մի քիչ ավելի հեռու Աղբն, Վանք, Գուշնա և Կոանի գյուղերում: Արարկիրցիք էլ նախապես ասում էին լըսիմ նը, լըսես նը... և այլն. լսեյիր նը, լսեր նը... և այլն: Կա նաև վիայություն, որ արարկիրցիք նախապես ասում էին լըսիմ ընը, լսես ընը, լըսինք ընը, և այլն. լսէյիր ընը, լսեյինք ընը, և այլն:

1 Պրոֆ. Զ. Անառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. Բ., էջ 343:

Թվում է, թե հնում այդպիսի մի իրողություն եղել է Արարկիրի քարրառում, երբ երկու եղանակիչներին՝ ն-ի և ը-ի (<ա<ահա) միջև պայքար է եղել, և այսօրվա բարբառի սահմ. ներկայում միայն երկու (Յ-րդ) դեմք են մնացել ն-ով՝ «լըսա նը, լըսեն նը». և երկու էլ՝ անցանկատարում՝ «լըսեյի նը, լըսեյին նը» հոգնակիներում՝ հավանաբար անշփոթության, հստակության համար:

Ինչ է այդ ն-ի ծագումը: Թվում է, թե դա այն իմաստ-շեշտող նա-ն է, որ կա ժնակ, նամանավանդ, նա զի, նա ուրեմն» ձևերում:

Այսպիսով արևմտահայ բարբառները առ այժմ բաժանվում են հինգ խմբերի.— կ խումբ, ղաը խումբ (Շ. Գարահիսար), ը խումբ՝ (Տրապիզոն), ահա խումբ (Քեսար՝ հա, Նիկոմեդիա՝ հայէ, Մալաթիա՝ ա. Կապան Մազեն՝ ա, Արարկիր՝ ը, Տիվրիկ՝ հ). և ն խումբ (Արարկիրի մի քանի գյուղեր և Համզեն):

Ինչ թվում է, որ արևմտահայ բարբառների ճյուղավորման հարցը վճռելուց առաջ անհրաժեշտ է կատարել որոշ բարբառագիտական աշխատանքներ, թե՛ բարբառների և թե՛ ենթաբարբառների վրա: